

II

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (Ըստ Թ. Թորամանյանի չափագրական նյութերի)

ՆԱՏԱԼՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Միջնադարյան մայրաքաղաք Անիի արվարձաններից Հոռոմոսը համարվել է Բաղրատունյաց արքունիքի ամենանշանավոր ամառային նստավայրը, իսկ հետագայում եղել է հանգստարան տոհմի իշխանավորների համար: Դեռևս X դ. սկզբին մի խումբ հոգևորականներ, որոնց մեջ էր Բյուզանդիայում հալածանքներից փախած Հովհաննես վարդապետը, այստեղ հիմնել են առաջին եկեղեցին՝ հետագայում այն վերածելով վանական համալիրի¹:

XX դ. սկզբին ճարտարապետ Թ. Թորամանյանը մանրակրկիտ հետազոտել է այն, և ապա, հիմնվելով հնագիտական ուսումնասիրությունների, սեփական հետազոտությունների և պրպտումների վրա, 1911 թ. հրատարակել «Որն է իսկական Հոռոմոսի վանքը» վերնագրով աշխատությունը:

Հուշարձանախմբի առանձին շինությունների կառուցման փաստերը ճարտարապետը ներկայացրել էր ըստ պատմիչ Ասողիկի, Ղ. Ալիշանի վկայությունների և այդ տեղեկությունների համադրությամբ հստակ կերպով հաստատել յուրաքանչյուր շինության կառուցման ժամանակաշրջանը: Այդ վկայությունների և շինությունների վրա առկա մեծաքանակ արձանագրությունների համաձայն, Հովհաննես վարդապետի կառուցած առաջին եկեղեցական շինությունը եղել է հյուսիսային կողմի ձորակի մեջ կառուցված Ս. Մինաս եկեղեցին (930–953), իսկ հետագայում՝ Գագիկ I Բագրատունի (990–1021) թագավորն իր դահակալության տարիներին, կառուցել է Ս. Գևորգ եկեղեցին² (նկ. 1): Բարձրավանդակի վրա կառուցված Ս. Հովհաննես եկեղեցին համալիրի ամենաուշ կառուցված եկեղեցական շինություններից է, որի մասին գրավոր աղբյուրներում պահպանված վկայությունները վերաբերում են Բագրատունի Հովհաննես Սմբատ թագավորի շինարարական գործունեությանը (1038)³:

Այսպես, հիմնավոր ներկայացնելով հուշարձանախմբի պատմական անցյալն ու կառուցողական ժամանակահատվածները, Թ. Թորամանյանը, հավանաբար, նպատակ է ունեցել հետագայում, հնարավորության դեպքում լրացնել այդ աշխատությունը սեփական չափագրություններով⁴, սակայն, ցավոք, այդ ծրագիրը չի իրականացվել:


¹ Հ. Ղ. վ. Ա. ի շ ա ն. Շիրակ. Վեներտիկ, 1881, էջ 29:

² Թ. Թորամանյան. Որն է իսկական Հոռոմոսի վանքը. Ալեքսանդրապոլ, 1911, էջ 2:

³ Ըստ եկեղեցու արևմտյան գոտան վրա պահպանված արձանագրության:

⁴ Թ. Թորամանյան. Երևան, 1968, № 8, 10, 11, 20, 21, 23, 25:

Ճարտարապետի կատարած չափագրական մեծաքանակ աշխատանքներից հրատարակվել են միայն մի քանի դժապատկերներ՝ հուշարձանների հատակագծերը և դեկորատիվ որոշ հարգարանքները⁵:



Նկ. 1

Գրեթե հարյուրամյա պատմութունն ունեցող թորամանյանական արխիվային նյութերից այն աշխատանքները, որոնք վերաբերում են Հոռոմոսի հուշարձանախմբին, 2002 թ. հրատարակվել են Փարիզում՝ լույս աշխարհ հանելով կործանման եզրին կանգնած ճարտարապետական հուշարձանների մասին լիարժեք և հիմնավոր տեղեկությունները⁶ ու հնարավորութունն ունենալով մեզ՝ ավելի մանրակրկիտ հետադոտելու այդ հուշարձաններից յուրաքանչյուրի ճարտարապետական, ծավալատարածական առանձնահատկությունները և կառուցողական օրինաչափությունները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում գլխավոր երեք եկեղեցիների համեմատական հետադոտությունը. հուշարձանախմբի Ս. Մինաս, Ս. Գևորգ և Ս. Հովհաննես եկեղեցիներն իրենց ճարտարապետական և կառուցողական առանձնահատկություններով վերաբերում են գմբեթավոր գահլիճների տիպին:


Ս. Մինասի եկեղեցին համալիրի առաջին և ամենափոքր պաշտամունքային կառույցն է, որի ճարտարապետական կերպարը հետագայում, հավանաբար, հիմք է ծառայել ամբողջ համակառույցի գեղարվեստական պատկերի ձևավորման համար: Դրա հատակագծային և ծավալատարածական առանձնահատկությունները որոշակի արտացոլումն են գտել մյուս երկու եկեղեցական կառույցների մեջ⁷:

⁵ J. Strzykowski. Die Baukunst der Armenier und Europa. Wien, 1918. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. Հ. I, Երևան, 1942, էջ 301–303:


⁶ Ա. Թ. Պալատյան, Ժ. Մ. Թիեռի, Ժ. Փ. Մազե. Հոռոմոսի վանքը. Թորոս թորամանյան. Անտիկ նյութեր. Փարիզ, 2002:

⁷ Նույն տեղում, էջ 27:

Արտաքուստ ուղղանկյուն հատակագծով (13,15 x 8,22 մ) շինության խոշոր որմնասյուների (1,33 մ) վրա վեր է խոյանում շրջանաձև հիմքով գմբեթի թմբուկը, որն իր գիրքով էի համընկնում կառույցի կենտրոնական առանցքի հետ, այլ տեղաշարժված է գետի արևմուտք՝ առավել մեծ տարածություն թողնելով ավագ խորանի և դրան կից ավանդատների համար: Վերջիններիս մուտքերը բացվում են գետի խորանը՝ ապահովելով դրա համար բավական լայն նախաբեմի տարածություն (նկ. 2): Եկեղեցու բոլոր պատերին, բացի արևմտյանից, դրսից առկա են եռանկյունաձև խորշեր, որոնք, կոնստրուկտիվ նշանակության հետ միասին, շինության համար ծառայում են նաև որպես դեկորատիվ հարդարանքի հիմնական միջոցներ (նկ. 3): Շրջանաձև հիմքով ոչ բարձր (2,9 մ) և համեմատաբար լայն (6,31 մ) թմբուկը հենվել է կամարակապ գմբեթատակ քառակուսու վրա, որն ավարտվել է կոնաձև սրածայր վեղարով, իսկ եկեղեցու ընդհանուր բարձրությունը կազմել է 15 մ:



Նկ. 2



Նկ. 3

Եկեղեցու մուտքերը երկուսն են: Սրանք բացվում են հարավային և արևմտյան կողմերից, իսկ լուսավորության համար թողնված բացվածքները շատ նեղ են՝ ամեն կողմից մեկական, բացի արևելյանից, ուր խորանի և ավանդատների մեջ բացվել են նույնպես մեկական փոքր պատուհան: Նման նեղ և երկար չորս լուսամուտներ են եղել նաև եկեղեցու շրջանաձև թմբուկի վրա, որոնց բոլորի վրա նուրբ ոլորահյուս և կաթիլաձև զարդանախշերով եզրակալներ կան⁸:

Հաշվի առնելով, որ շինություններն ունեն հիմնականում շատ զուսպ արտահայտված արտաքին մակերեսներ, հատկապես ուշագրավ են դառնում դրանց ճակատային որոշ շեշտադրված հատվածները՝ տանիքատակ քիվերը, լուսամուտների եզրակալները և եռանկյունաձև խորշերի գլխամասերը:


⁸ Նույն տեղում, էջ 28-35:

Եկեղեցու ամենագրավիչ հարդարանքը գմբեթատակ քիվն է, որն ունի փոքր գնդերով շրջապատված քառատերև բավական լայն զարդանախշ: Սրանից բացի, ավելի ցած լուսամուտի մակարդակից վեր, գմբեթի թմբուկը գոտևորում է ևս մի պարզ, բայց ուշագրավ ոլորահյուս զարդագոտի:


Լուսամուտներից վեր տեղադրված հավասարաթև խաչերով ներգծված նրբաքանդակ վարդյակներից յուրաքանչյուրն իր հերթին նույնպես ներառվել է ոլորածև պարզ նախշով եզրակալի մեջ: Արևմտյան ճակատին՝ գուռն վերնամասում, երևում է մի վարդյակ ևս՝ առանց եզրակալի, իսկ հարավային ճակատի կենտրոնական լուսամուտից աջ, խորշերի վերին մակարդակին հավասար՝ արևի ժամացույցի հարթաքանդակ (նկ. 4):

Ս. Մինաս եկեղեցին ունեցել է նաև ներքին հարդարանք, բայց միայն գլխավոր խորանի հատվածում: Դա իմպոսանների խաչվող կամարներով զարդանախշն է, ինչպես նաև խորանի ոլորածև և կաթիլավոր նախշազարդով հարդարանքը, որ կարծես թե ավելի բնորոշ է վաղ միջնադարյան ճարտարապետությանը:

Ս. Գևորգ եկեղեցին իր համաչափություններով համեմատաբար ավելի մեծ է (16,42 x 10,40 մ) Ս. Մինաս եկեղեցուց, բայց իր ծավալատարածական հորինվածքով համահունչ է նրա հետ: Հատակագծային հորինվածքում հատկապես արտահայտվում են (նախորդի նմանությամբ) շինութային համամասնությունները՝ արևելյան և արևմտյան թևերի անհավասարությունները և գմբեթատակ տարածության կենտրոնական դասավորությամբ (նկ. 5): Եկեղեցու ճիշտ կենտրոնում՝ չորս հսկա (1,73 մ) կամարակապ որմնասյուների և առագաստների վրտ, բարձրանում է 6,70 մ տրամագծով



Նկ. 4




Նկ. 5

գմբեթը (նույնպես շրջանածև թմբուկով): իր ընդհանուր՝ 20,3 մ բարձրության և բարձր ճակտոնների շնորհիվ, կառույցն ընկալվում է բավական վեհաշուք և սլացիկ⁹: Եկեղեցու միակ մուտքը հարավային կողմից է, որն ունի գեղեցիկ և պարզ հորինվածքով կամարակապ կիսասյուներով հարդարված շքամուտք: Լուսամուտները նույնպես սակավ են՝ մեկական

⁹ Նույն տեղում, էջ 37:

յուրաքանչյուր ճակատի ու ավանդատների և չորսն էլ գմբեթի թմբուկի վրա: Արտաքին ճակատների հարթ մակերեսների միակ հարդարանքը ճակատային եռանկյունաձև խորշերն են՝ իրենց վերին հատվածների ոլորահյուս կամարներով, ինչպես նաև լուսամուտների ուղղանկյուն ու շրջանաձև քանդակազարդ եզրագոտիները: Զտմբյուղաձև հյուսակեն զարդանախշերով են հարդարվել ճակտոնների և տանիքատակ քիվերը: Եկեղեցու գլխավոր դեկորատիվ հարդարանքը կարող է համարվել հարավային ճակատի միակ շքամուտքից վեր տեղադրված լուսամուտը, որն իր զույգ կիսաշրջան որմնասյուղներով հարդարված հորինվածքում վերևից ավարտվել է պարզ տրամատի եզրակալով, սակայն դրա երկու կողմերից պարզորոշ առանձնանում են կիսասյուղների երկրաչափական քանդակներով զարդարված զույգ խոյակներն ու խարիսխները: Նման հարդարանք է ստացել նաև դրանից վեր թմբուկի վրա բացվող նեղ լուսամուտը¹⁰: Հիմնական շեշտ ունեցող այս դեկորների կողքին որոշ տեղերում (արմ. ճակատ, խորանի ներսի կողմ) փորագրված են գեղաքանդակ խաչեր (նկ. 6): Սակայն եկեղեցու գեղարվեստական ամենաարտահայտիչ հնարքները, հավանաբար, պետք է համարել շինության ներքին տարածքը հարստացնող սյունափնջերը, որոնցով մշակված են գմբեթակիր որմնասյուղները: Իրանց տարածական, բայց պարզ կտրվածքի խոյակներն ու խարիսխներն առանձնահատուկ խստություն են հաղորդում շինության ներքին տարածությանը:



Նկ. 6

Հետազոտության ընթացքում եկեղեցաշինության մեջ մի նոր ճարտարապետական տարր է բացահայտվում: Շինության հարավային ճակատի ճախ հատվածի կլոր շրջանագծով լուսամուտը, որը հանդիսանում է լույսի լրացուցիչ աղբյուր, կարելի է ներկայացնել նաև որպես նորամուծություն՝ զարգացած միջնադարի դեկորատիվ հարդարման ասպարեզում, ի տարբերություն ավելի վաղ շրջանում կառուցված Զվարթնոցի նմանատիպ լուսամուտների:

Ս. Հովհաննես եկեղեցին (17,90 x 11,65 մ) նույնպես «գմբեթավոր դահլիճ» տիպին պատկանող և ավելի ուշ կառուցված պաշտամունքային շինություն է, սակայն շրջանաձև թմբուկով և կենտրոնում տեղավորված գմբեթով (20,8 մ): Եկեղեցին շատ ընդհանրություններով է առնչվում իրեն նախորդող կառույցների հետ՝ հատկապես հատակագծային լուծում-

¹⁰ Նույն տեղում, էջ 38-46:

ներով, հսկա կամարակապ որմնասյուներով (1,93 մ) և շրջանաձև թմբուկ ունեցող գմբեթով (նկ. 7):



Նկ. 7


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին երկու եկեղեցիների երկայնական ու լայնական, ինչպես նաև ճակտոնների լայնության և բարձրության հարաբերությունները հավասար են միմյանց, կարելի է վստահորեն ասել, որ ուսումնասիրվող շինություններն ունեն կառուցողական շատ հարազատ սկզբնաղբյուրներ¹¹: Եկեղեցու միակ մուտքը բացվել է արևմուտքից, իսկ լուսավորությունն իրականացվել է ճակատների և գմբեթի թմբուկի վրա բացված չորս բավական նեղ ու երկար լուսամուտներով: Ս. Հովհաննես եկեղեցին համալիրում կառուցվել է միջնադարյան շինարարական ամենաբեղմնավոր գործունեության ընթացքում (XI դ. կես), հետևաբար, ենթադրվում է, որ այն պետք է հարուստ լիներ այդ շրջանի կառուցողական արվեստի զարգացած արտահայտչամիջոցներով՝ Անիի նույն դարաշրջանի ճարտարապետական կոթողների հետ համեմատած: Սակայն եկեղեցին ունեցել է շատ զուսպ հարդարման միջոցներ: Դարաշրջանի մեծ կարևորություն և նշանակություն ունեցող եկեղեցական այս կառույցի արտաքին գեղարվեստական հարդարման մարմնավորումները միայն պարզ տրամատով լուսամուտների և եռանկյունաձև խորշերի եզրակալներն են¹²: Շինության արտաքին հարդարման ամենացայտուն հատվածը շինության արևելյան ճակատն է. ավագ խորանի լուսավորության բացվածքի շուրջ երեք եռակի սյունափնջերով և դրանք միավորող պարզ կամարներով մի հարթաքանդակ կա: Դրա շատ պարզ կամարներով միավորված և պտուտաձև մշակմամբ 3/4 որմնասյուներն ավարտվել են նուրբ խարիսխներով ու խոյակներով: Նույն ճակատում ավանդատների լուսավորության համար բացված լուսամուտների շրջանակները արտաքինից նույնպես ունեն հյուսանաձև և շրջանաձև հարուստ զարդա-

¹¹ Նույն տեղում, էջ 55–61:


¹² Նույն տեղում, էջ 62–71:

նախշեր, եզրագոտիներ, որոնցից հարավայինն ունի ուղղանկյունաձև, իսկ հյուսիսայինը կիսաշրջանաձև գլխամաս (նկ. 8):

Եկեղեցու հարավային և հյուսիսային պատերին՝ Ս. Գևորգ եկեղեցու նմանությամբ, թողնված են շրջանաձև երկու լուսամուտներ, որոնք հատկապես գեղեցիկ մշակում ունեն շինության ներսում, որտեղ գեղարվեստական գլխավոր արտահայտչամիջոցը համարվում է եկեղեցու ընդհանուր հատվածը. այն իրենից ներկայացնում է երկրաչափական, բուսական և հյուսիսյան ուղղանկյուն 80 բազմապիսի զարգանախշերից կազմված մի հարթաքանգակ, որին այդ դարաշրջանի համարժեք նշանակության գեղարվեստական գործ դժվար է ներկայացնել (նկ. 9):



Նկ. 8



Նկ. 9

Համաչափական հետազոտության ընթացքում բացահայտվել է ևս մի օրինաչափություն, որն ընդհանրացնում է այս կառույցները: Մավալային և տարածական կերպարում բոլոր երեք կառույցներն ամփոփվել են միանման գմբեթների և գրանց շրջանաձև հատակագծային թմբուկների մեջ: Փոքրից մեծ գրանց բարձրությունները՝ 6,8 մ, 8,8 մ և 9,0 մ տարածական համաչափական համակարգում, ապահովել են կառույցների գրեթե միանման հարաբերական բարձրություն, այսինքն՝ երկրորդ մակարդակի (գմբեթ և թմբուկ) չափերը 2,2 և 2,3 անգամ փոքր են գրանց ընդհանուր բարձրության չափերից:

Այսպիսով, մոտ հարյուրամյա շինարարական գործունեության արդյունքում (X—XI դդ.) Հոռոմոսի գեղատեսիլ բնության գրկում, իրարից ոչ շատ հեռու կերտվել են ճարտարապետական և գեղարվեստական շատ առնչություններ ունեցող երեք շինություններ, որոնք բնորոշում էին զարգացման մի ժամանակաշրջան, երբ ձևավորվում էին տարածաշրջանի կառուցողական արվեստի առանձնահատուկ հորինվածքները: Դրանց հատակագծային, ինչպես նաև ծավալատարածական ու հատկապես դեկորատիվ հարզարանքների պարզ և հստակ հորինվածքներն ամենևին էլ են համապատասխանում նույն շրջանի Անիի կառուցողական շքեղ ոճին, գուցե հիմնականում ձգտելով դեպի առավել վաղ շրջանի ճարտարապետական հատկանիշները: Ինչևէ, միջնադարյան այս կառույցների յուրահատուկ լուծումները բնորոշում են եկեղեցական կառույցի ճարտարապետական ավարտուն և ինքնատիպ կերպարը:

Գրեթե հարյուրամյա անհայտութիւնն ից դուրս բերելով Թ. Թորամանյանի չափազարական նյութերը, անհնար է գերազնահատել նման հրատարակութեան կարևորութիւնը, երբ պատմական անդառնալի իրավիճակների արդիւնքում, Հայաստանի պետական սահմաններից դուրս հայտնված ճարտարապետական համալիրի հուշարձանները ստանում են կրկին հետազոտվելու և, ինչու չէ, նաև վերականգնվելու ու հետազոտում պահպանվելու երանելի հնարավորութիւն:

ЦЕРКВИ ОРОМОССКОГО МОНАСТЫРСКОГО КОМПЛЕКСА
(По обмерным материалам Т. Тораманяна)

НАТАЛЬЯ ТАДЕВОСЯН

Р е з ю м е

Архитектурное исследование церковных сооружений средневекового монастыря Оромоса (к северо-востоку от Ани) основано на опубликованных в 2002 г. графических материалах Тороса Тораманяна. На основании этих обмеров рассматриваются архитектурные, конструктивные и декоративные особенности “купольных залов” трех церковных сооружений, которые были построены в X–XI вв. Исследование показало, что если архитектурные облики церквей идентичны во многих отношениях и соответствуют данному периоду “расцвета”, что господствовал в торжественном стиле средневековой столицы Ани, то декоративные убранства довольно скромные и типичны для более раннего периода. Сохраненные обмерные материалы обогащают архитектурное наследство средневековой Армении и открывают новые рубежи для разностороннего изучения церковных сооружений Оромосского монастыря, которое было начато около века тому назад.

THE CHURCHES OF HOROMOS MONASTERIAL COMPLEX
(Based on graphic materials of T. Toramanyan)

NATALYA TADEVOSYAN

S u m m a r y

The architectural exploration of the medieval church complexes of Horomos (to the north-east Ani) is based on the new graphic materials of Toros Toramanyan published in Paris (2002). Three churches of this complex are closely related according to their plan, spatial and decorative shapes. They were created during one century (the 10th – the 11th cent.) and have similar compositions which are demonstrated in the preserved design works. Their architectural type of the “domed halls” was largely spread in flourished medieval period, when rich and prosperous architectural constructions of medieval Ani were created. The decor is simple few and modest, which is more typical for earlier period of time. The preserved graphic works give opportunities for further exploration of the churches in architectural complexes of Horomos which started nearly one century ago.